ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 փետրվարի 2024 թվականի N 280 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱ-ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 2001-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՍԹԻԼ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 2001-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) «Տեխնոլոգիական սարքավորումներ, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասեր» աղյուսակը 22-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 23-24-րդ կետերով.

«

23.	7318149900	Պտուտակներ սև մետաղից ինքնապարուրվող, ցինկապատ, իր տափօղակով՝ մետաղի համար	Պտուտակներ	կգ	250 000	Հարավային Կորեա, Չինաստան, Լեհաստան, Թուրքիա, Ուկրաինա, Իրան, Հնդկաստան	Հարավային Կորեա, Չինաստան, Լեհաստան, Թուրքիա, Ուկրաինա, Իրան, Հնդկաստան	150 000 000	
24.	7318129000	Պտուտակներ սև մետաղից տափօղակով, ցինկապատ՝ փայտի համար	Պտուտակներ	կգ	250 000	Հարավային Կորեա, Չինաստան, Լեհաստան, Թուրքիա, Ուկրաինա, Իրան, Հնդկաստան	Հարավային Կորեա, Չինաստան, Լեհաստան, Թուրքիա, Ուկրաինա, Իրան, Հնդկաստան	150 000 000	

».

2) «Տեխնոլոգիական սարքավորումներ, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասեր» աղյուսակի «Ընդամենը» պարբերության մեջ «1 059 301 704» թիվը փոխարինել «1 359 301 704» թվով.

3) հավելվածի «Ընդամենը» պարբերության մեջ «33 950 108 408» թիվը փոխարինել «34 250 108 408» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ